Արձանագրություն N 2

ԻԿՎԾԻԿ- ՀՄԱ-ԱՊՁԲ -19/37 ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան

15.05.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Ավետիսյան

Լ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Մհերյան

1. *Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու* ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ.Բաղդասարյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 ԻԿՎԾԻԿ- ՀՄԱ-ԱՊՁԲ -19/37 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 10:00-ին, ք.Երևան,Մ.Խորենացու 162/ա հասցեում: ԻԿՎԾԻԿ- ՀՄԱ-ԱՊՁԲ -19/37 ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«Լիմուշ» ՍՊԸ Ք.Երևան,Քոչինյան 21/3 Հեռ.060 74 22 99 Էլ.հասցե՝ sales@limush.am

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.2 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերով սահմանված կարգի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.3 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ -ի հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.4 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.5 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշները համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.6 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.7 Մասնակից «Լիմուշ» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած գնային առաջարկը հետևյալն է՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները				
			«Տիգվակո» ՍՊԸ		
	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Թուղթ 130գ/բ.մ., կավճապատ, 210x297մմ	21250	19500	3900	23400
2	Թուղթ SRA3 200գ.բ.մ.կավճապատ, 450x320մմ	29750	23333.33	4666.67	28000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0

1.8 Ընթացակարգի հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5 ենթակետով, որոշել էր կասեցնել նիստը և 1-ին չափաբաժնի մասով «Լիմուշ» ՍՊԸ-ին 2019 թվականի մայիսի 15-ին, ժամը 10:00-ին հրավիրել էր ԻԿՎԵԻԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/37 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գների

նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Սակայն բանակցությունների նիստին մասնակիցը ներկա չէր և քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի ներկայացրած գինը գերազանցում էր տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0:

1.9 Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Լիմուշ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդուվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0

1.10 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.11 Հանձնաժողովը որոշեց մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.12 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին. (Վ.Բաղդասարյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց ԻԿՎԾԻԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/37 ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղը գրաղեցնող մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը ժամը՝ 10:00-ին, ***ք.Երևան,Մ.Խորենացու 162/ա*** հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	Վ.Բաղդասարյան	
Անդամներ՝	Լ.Հարությունյան	
	Ն.Ավետիսյան	

Հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Միերյան